ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

1.03.2019
341-69

ՀՀ վարչապետի աշխատակազմի
ղեկավար պարոն Էդուարդ Աղաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աղաջանյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2018 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթերի մասին էլեկտրոնային հարցմանն ի պատասխան ՀՀ վարչապետի աշխատակազմը 26.02.2019 թ.-ին ԻԱԿ-ին ուղարկված գրությամբ տեղեկացրել է, որ «2018 թվականի ընթացքում ՀՀ վարչապետի աշխատակազմը «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն Հայաստանի ազգային արխիվի պահպանությանն է հանձնել պահպանման ժամկետները լրացած պետական և ծառայողական գաղտնիք կազմող գաղտնազերծված փաստաթղթերը»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. ՀՀ վարչապետի աշխատակազմի տնօրինության տակ գտնվող քանի՞ փաստաթուղթ է գաղտնազերծվել 2018 թվականի ընթացքում:
2. Տրամադրել 2018 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթերի ցանկը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան